

մահացուցին, ցուցնելով՝ թէ գիտէին բարին զատել չարէն: Կարելի չէ մոռնալ մեր Տրդատներն ու Վռամշապուհները, Վասակները, Մուշեղները¹, Մանուէլները, Վարդաններն ու Վահանները, Սշոտները, Լեւոններն ու Հեթումները, որոցմով իրաւունք ունինք հպարտանալու եւ պարծելու: Սակայն եթէ ընկերութեան մը բարոյականը հարկ է որոնել անոր ստուար մեծամասնութեան մէջ, մեր ցարդ նկատած վկայութիւնք եւ օրինակները դժբախտաբար չեն ներեր մեզ այդ համեմատութիւնը տեսնել մեր ազնուական դասուն մէջ: Եւ յիշեալ առաքինիք գրեթէ վարսամներ կը հանդիսանան հին Հայաստանի երկնակամարին վրայ. դարերու մէջ կ'երեւին, ու կը մեկնին անհետ եւ անդարձ: Սյդ կորովի եւ զգաստ հոգիները պիտի մնան միշտ իրենց պատուանդանին վրայ. բայց երբեք չպիտի լինին հայ ազատանւոյն սովորական պատկերն անցած դարերու շրջանին մէջ:

Եւ երբ վաղը մեր ուշիմ ու պատճառախնդիր զաւակներն հարցնեն մեզ՝ թէ ինչո՞ւ հին Հայր պատերազմիկ ազգ մը չեղաւ, մեք՝ իբրեւ խոհական մարդիկ քան

1. Բաց արբեցութենէն՝ որ հասարակաց սկարութիւնն էր: